# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

“20” դեկտեմբերի 2012թ. № 135-Ա

## «ՏԱՎՐՈՒՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. 2012թ. դեկտեմբերի 20-ից լուծել «Տավրուսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կամո Ավանեսյանի հետ 2007թ. դեկտեմբերի 20-ին կնքված N 22 աշխատանքային պայմանագիրը՝ նրան նշանակելով նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից այն զբաղեցնելը:

Հիմք՝ Կ.Ավանեսյանի անձնական դիմումը:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.դեկտեմբերի 20
ք. Կապան